ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/165

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.10.2019թ. թիվ 26/26-1/16251-2019 գրությամբ «Մենար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 27.09.2019թ. թիվ 02/07.3/6936-2019 գրության հիման վրա, 03.10.2019թ. թիվ 26/26-1/16251-2019 գրությամբ նախաձեռնել է «Մենար» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մենար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Մենար» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/165 ընթացակարգի շրջանակներում 07.10.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.09.2019թ. թիվ 02/07.3/6936-2019 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից կազմակերպած «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում 3-րդ չափաբաժնով (ցերեկային լամպեր) ընտրված մասնակից է ճանաչվել «Մենար» ՍՊԸ-ն, սակայն վերջինս հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/165 ընթացակարգի շրջանակներում 07.10.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/165 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/165 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մենար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մենար» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ, 6-րդ և 9-րդ չափաբաժինների մասով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.08.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մենար» ՍՊԸ-ն Ընթացակարգի 3-րդ, 6-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

4. Պատվիրատուին ուղղված 21.09.2019թ. գրությամբ «Մենար» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընկերությունը հրաժարվում է կատարել «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/60-2» ծածկագրով պայմանագրի 3-րդ չափաբաժինը (ցերեկային լամպ 60սմ):

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.10.2019թ. թիվ 26/26-1/16251-2019 գրությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 27.09.2019թ. թիվ 02/07.3/6936-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մենար» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած Ընթացակարգի 3-րդ, 6-րդ և 9-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.08.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մենար» ՍՊԸ-ն Ընթացակարգի 3-րդ, 6-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, որին 17.09.2019թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Պատվիրատուին ուղղված 21.09.2019թ. գրությամբ «Մենար» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընկերությունը հրաժարվում է կատարել «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/60-2» ծածկագրով պայմանագրի 3-րդ չափաբաժինը (ցերեկային լամպ 60սմ):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ «Մենար» ՍՊԸ-ն Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Պատվիրատուին ուղղված 21.09.2019թ. գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքելուց, ուստի արձանագրում եմ, որ վերջինս թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, հետևաբար առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.10.2019թ. թիվ 26/26-1/16251-2019 գրությամբ «Մենար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Մենար» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**